№ 129 Յուլիսի 25 (Օգոստոսի 6) 1880 Յուլիսի 25 (Օգոստոսի 6) № 129

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրքաց Հայաստանը։ — Ներքին տեսութիւն։ Նամակ Բագուից։ Նամակ Բագուից։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Նամակ Շուշուց։ Նամակ Գանձակից։ Նամակ Նոր-Նախիջևանից։ Նամակ Նուխուց։ Նամակ Եալտայից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Ռումինիա։ Յունաստան։ Զկրնօգորիա։ Արտաքին լուրեր։ — «Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։

ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԸ

—

Կ. Պոլսում հրատարակվող «Թէրճէմանը Լէֆքեար» հայոց լրագիրը տպել է նորերում մի յօդուած «Հայաստան» վերնագրով. որի մէջ նկարագրում է Հայաստանի աշխարհագրական դիրքը, յիշում է թէ հայերի թիւը Թիւրքիայում, Ռուսաստանում և Պարսկաստանում ընդամենը 5 միլիոնի է հասնում, յետոյ անցնում է Թիւրքաց Հայաստանի նկարագրելուն, բերելով Հայաստանի այդ մասի ազգաբնակութեան հետաքրքիր թուանշանները։ Քաղում ենք յօդուածից հետեւեալ տեղը։

«Հայ քրիստոնեայք, լուսաւորչական, կաթոլիկ և բողոքական հայք ևս մէկ տեղ առնելով, առաւել քան 2,000,000 հոգի են։ Հայ իսլամացեալք առաւելապէս սիւննի աղանդի 500,000, հայ այլ և այլ քրիստոնեայք, իբր իսլամ հասարակութեանց հետ խառնված 300,000 հոգի։ Ընդամենը 2,800,000 հոգի։

«Հայաստանի հին բնակչաց սերունդն են ասոնք ևս։ Լաղբ, այսինքն հին կողքիացիք, կամ խաղտիք, կամ ուղղագոյն ևս արմենո-քալիպք 100,000, քիւրդք բնակաւոր և վաչկատուն 500,000 հոգի։»

Ուրեմն վերև յիշված 2,800,000 թուանշանի հետ, Թիւրքաց Հայաստանի հին, բնիկ, ազգաբնակութեան թիւը կը լինի 3,400,000 հոգի։

«Իբրև կէս գաղթական, շարունակում է Կ. Պոլսի լրագիրը, ասոնք են. քաղդէացիք (քրիստոնեայ), չէրքէզք, ապազայք, պարսիկք և այլն, բոլորը 400,000 հոգի, իսկ բուն գաղթականք ի Հայս կրնան համարվել ասոնք՝ Թուրք (աւելի արևմտակողմն), Թաթարք, (սակաւաթիւք), Թիւրքմէնք (վաչկատուն), արաբք (վաչկատուն), հրէայք և քրիստոնեայ յոյնք և ասորիք, բոլորը միասին 700,000 հոգի։»

Այդպիսով «Թէրճէմանը Լէֆքեար» լրագրի հաշուով Թիւրքաց Հայաստանի բնիկ և գաղթական ազգաբնակութիւնը միասին վերառած կազմում է 4,500,000 թիւր։

Լրագիրը աւելացնում է իր յօդուածին հետևեալ դատողութիւնները։

«Ինչպէս յայտնի կը տեսնվի, Հայաստանի բնակչաց՝ չորս հինգերորդականէն աւելին՝ երկրին բնիկն է։ Հայաստանը, ինչպէս քսան և աւելի միլիոն բնակիչ ունեցած ատեն, նոյնպէս և անկէ ետև միշտ իր սեփական անունը պահած էր և ասկէ երեք չորս դար առաջ նոյն քիւրդ և Թիւրքմէն իշխանք, որոնք ժամանակ մը Հայաստանի վրա Թագաւորեցին, կը յարգէին զայն և կանուանէին Հահի-Արմէն և ոչ Հահի-Թիւրմէն կամ Հահի-Քիւրդ, բնակչաց նուազելուն և գաւառաց նոր անուանակոչութիւնը ստանալուն համար երկրին սեփական անունը փոխելու հարկ մը չի տեսնելով։

«Հայաստան իր նախնի անունը պահելու ամեն յատկութիւնն ունի։ Հայ ազգին մեծամասնութիւնը հոն կը բնակի, նոյն երկրին բնակչաց ամենէն կիրթ և յառաջադէմ, իրեն յատուկ եղած սեփականութիւններն պահած։ Իր լեզուն թէև չէ պաշտօնական, գրեթէ բոլոր երկրին մէջ տարածված է և հայերէն զատ կը խօսին զայն նաև Հայաստանի մէջ գտնվող յոյներէն, քաղդէացիներէն, ասորիներէն շատերը և նոյն իսկ մեծ բազմութիւն իսլամներէն. իսկ հասկանալու գալով գրեթէ խիստ սակաւ է բացառութիւնը և այն սահմանաց ծայրերը։»

«Սուրիա, վերջացնում է իր յօդուածը Կ. Պոլսի լրագիրը, որ այսօր պաշտօնապէս անուանված է իր սեփական անուամբ, իր ասորի լեզուն պահած չէ, այլ արաբերէն կը խօսի, և բնակչաց հազիւ երրորդ մասը ասորի է, այլ և այլ հասարակութեանց բաժանված իբր բոլորովին զատ ազգ և հայ ազգին թուոյն հետ համեմատելով, աննշան թիւ մը կը կազմէ։»

Շատ ուրախալի է որ վերջին ժամանակները Կ. Պոլսի հայոց մամուլը սկսել է խղճմտաւոր և լուրջ կերպով ուսումնասիրել Թիւրքաց Հայաստանը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Յուլիսի 12-ին

Բագուի «Մարդասիրական ընկերութիւնը», կարծեմ, իր գոյութիւնից սկսած ունեցել է իր մատենադարանը։ Բայց թէ այդ մատենադարանը տուել է արդեօք այն օգուտը, որը սպասելիս է եղել նորանից տեղիս հայ-հասարակութիւնը,—դա ուրիշ խնդիր է։

Թէև ուշ, բայց այնու ամենայնիւ, միտ բերին վերջապէս ընկերութեան անդամները դրադարանական մասին վերաբերող իրանց պարտքը,—համոզվեցին վերջապէս, որ պահարանում դարսած Աստուածաշունչները բաւական չէին հասարակութեան մէջ ընթերցանութիւնը զարգացնելու համար և դիմեցին այլ միջոցի, բաց արին «Մատենադարան» ընթերցանութեան համար, դնեցին և բերել տուին նոր գրքեր, հաստատեցին կանոններ, վարձեցին գրապահ.—մէկ խօսքով հանդուցեալ գրադարանին յարութիւն տուին, նոր կեանք, նոր հոգի չնորհեցին։

Թէև Բագուի այդ նորաբաց մատենադարանը չունի դեռ ևս այնքան լաւ գրքեր, թէև գտնվող գրքերն էլ ըստ ամենայնի լիակատար չեն, այնպէս որ խնդրողին պատահում է ստանալ մի գրքի երկրորդ հատորը, որովհետև առաջինը չը կայ, կամ առաջինը—առանց չարունակութեան, և երբեմն էլ սկիզբը առանց քանի մի թերթերի,—բայց, այնու ամենայնիւ, չը պէտք է յուսահատվել, պէտք է յուսալ՝ որ կը զարգանայ, կը հարստանայ և կը բարեկարգվի։

Մատենադարանիս գրապահական պաշտօնը, բաւական ռօճիկով վարում է Մելիք-Մուսայեանց ազգանունով մի երիտասարդ, բայց հասկանում է նա արդեօք իր ստանձնած պարտաւորութիւնը, ցաւակցարար պէտք է բացասական պատասխան տամ։ Այլ ևս չեմ խօսում այն խայտառակ անցքի մասին, որ նորերումս պատահել է այդ գրադարանում, այն է մի կռիւ գրապահի և մի այցելուի մէջ։

Մի վաճառական

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

31 մայիսի

Մայիսի 25 տեղիս «Մարդասիրական ընկերութիւնը» պիտի կատարէր իր գործունէութեան 16-րդ տարեդարձի շրջանը։ Այդ առիթով նա հրաւիրեց քաղաքիս մէջ գտնվող ընկերութեան անդամներին և անդամուհիներին ներկայ լինել Ս. Լուսաւորիչ եկեղեցում, ուր պիտի կատարվի այդ օրվայ պատճառով Կայսրի համար գոհացողական մաղթանք, իսկ ընկերութեան հանգուցեալ անդամների համար հոգեհանգիստ, և այդպէս էլ եղաւ։

Այդ օրուայ տօնին մի առանձին նշանակութիւն տալու համար երկսեռ դպրոցների ուսուցիչ պ. Ա. Գրիգորեանցը մի ուսանողական հանդէս կատարեց ընկերութեան դահլիճում։ Երբ պատարագը վերջացաւ, բազմութիւնը հաւաքվեց ընկ. դահլիճը, որը բաւական գեղեցիկ կերպով զարդարած էր, որտեղ պ. Ա. Գրիգորեանցը կարդաց ընկերութեան 16-րդ տարեդարձի առիթով մի գեղեցիկ ճառ, որի մի մասը վերաբերում էր Կայսրին, որ այդպիսի մի առանձնաշնորհութիւն արել է Բագուին, նորա մէջ «Մարդասիրական ընկերութիւն» հաստատելով։ Երկրորդ մասի մէջ պ. ճառախօսը յայտնում էր՝ թէ որքան մեծ նշանակութիւն ունի մի որ և է ընկերութիւն հասարակական կեանքի մէջ, և ապա մասնաւորից նա իր խօսքը «Մարդասիրական ընկերութեան» դարձնելով, նորա գործունէութիւնից մի քանի տեղեկութիւններ հաղորդեց հանդիսականներին։ Երրորդ մասի մէջ պ. Գրիգորեանցը ասաց. «Որովհետև «Մարդասիրական ընկերութեան» ինիցիատօրը հանգուցեալ Ռոստոմեանցն է եղել, այդ պատճառով ցանկալի էր, որ ընկերութեան խորհրդական ժողովը, նորա անունը միշտ անմոռաց պահելու համար, մի բիւստ դնէր նորա վրա, 'ի հարկէ բաժանորդագրութեամբ։ Իսկ եթէ այս անդամ ևս անուշադիր թողնվեցաւ այդ դիտաւորութիւնը, ասաց պ. Գրիգորեանցը, այնուհետև ես այս փոքրիկ ժողովրդով (ցոյց տալով ուսանողներին) կըսկսեմ սկիզբ դնել այդ գեղեցիկ գործին, յուսալով բաղուցիների բարեսրտութեան և առատաձեռնութեան վրա։ Խօսքը վերջացրեց նորանով, որ նոյն օրը հայոց Կաթուղիկոսի 13-րդ օծման տարեդարձն է և մենք, նորա հոգևոր որդիները, պիտի չնորհաւորենք նորան երկար կեանք։ Սորանից յետոյ մի օրիորդ կարդաց մի երախտագիտական ճառ դէպի «Մարդասիրական ընկերութիւնը», որից յետոյ ավելցան ոտանաւորներ և պատմածներ ուսանողներից, որ գեղեցիկ տպաւորութիւն գործեցին հանդիսականների վրա։

Մ.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

Յուլիսի Ալէքսանդրապօլի վիճակային հոգևոր դպրոցի մէջ ուսանող աշակերտների անունից, որք նուիրեցին յօգուտ Վանայ սովալ հայ ժողովրդեան կամաւոր դրամական նուէրներ։

Անյայտ ումն 1 ր., Խոսրով Միրզայեանց 1 ր., Թադէոս Մոռաեանց 1 ր., Յարութիւն Իզրաչեանց 1 ր., Յարութիւն Կարապետեան 1 ր., Աղասի Պահլաւունի 20 կ., Կարապետ Յակոբեանց 1 ր., Կարապետ Խաչիրեանց 1 ր., Գէորգ Անմեղիկեանց 1 ր., Վահան Ամատունի 50 կ., Ղասապեանց Յովհաննէս 50 կ., Համազասպ Ստեփանեանց 40 կ., Վահան Անպէտքեանց 20 կ., Յովհաննէս Համբարձումեանց 5 կ., Ենովք Հայրբաբամեան 10 կ., Միքայէլ Քոսայեանց 5 կ., Յակոբ Մոռայեանց 15 կ., Արտաշէս Տայեանց 1 ր., Ալէքսանդր Պետրոսեանց 15 կ., Կարապետ Աղաբաբեանց 15 կ., Համազասպ Ամիջանեանց 40 կ., Վաղարշակ Պետրոսեանց 30 կ., Երուանդ Լալայեանց 50 կ., Տիգրան Անմեղիկեանց 1 ր., Հմայեակ Վանեցեանց 1 ր., Համազասպ Վանեցեանց 1 ր., Մկրտիչ Տէր Յովհաննէսեանց 20 կ., Կարապետ Տէր Յովհաննէսեանց 20 կ., Ալէքսանդր Խումարեանց 1 ր., Մկրտիչ Զարչոնեանց 15 կ., Գարեգին Անմեղիկեանց 20 կ., Արամ Շաթիրեանց 1 ր., Մինաս Տէր Բարսեղեան 50 կ., Յովհաննէս Ղազարեանց 10 կ., Համբարձում Ղարիբեանց 40 կ., Մկրտիչ Տէր-Մկրտչեանց 40 կ., Հայկ Ջալալեանց 10 կ., Արամ Պաստուրմաճեանց 50 կ.,

Միքայէլ Սարգսեանց 15 կ., Արամ Տէր-Գրիգորեանց 50 կ., Եռովք Զարչոզլեանց 2 կ., Սիմէոն Մխիթարեանց 20 կ., Յարութիւն Վ. 1 ր., Վահան Տէր-Սարգսեանց 1 ր., Արշակ Ղուկասեանց 1 ր., Մովսէս Մնացականեանց 20 կ., Սարգիս Կիւրեղեանց 25 կ., Մարտիրոս Կիւրեղեանց 10 կ., Համազասպ Խպիրեանց 40 կ., Արշակ 40 կ., Թադէոս Կարապետեանց 20 կ., Զաքարիայ Մեռկելեանց 40 կ., Հմայեակ Զմշկեանց 40 կ. Յարութիւն Նազարէթեանց 40 կ., Արտաշէս Տարմղճեանց 30 կ., Գէորգ Աւետիսեանց 20 կ., Յովհաննէս Մկրտչեանց 1 ր., Գրիգոր Սանոյեանց 40 կ., Նիկողայոս Մխիթարեանց 36 կ., Յովհաննէս Զախմախչեանց 20 կ., Մուրթաֆեանց Աղաբէկ 5 կ., Նալեանց Սուրէն 20 կ., Յովհաննէս Թումանեանց 30 կ., Ալէքսանդր Մխիթարեանց 30 կ., Թադէոս Արշակունի 31 կ., Համազասպ Զմշկեանց 50 կ., Գէորգ Չիլինկարեանց 15 կ., գումարն է 31 ռուբլ 29 կոպէկ։

Աբիսողոմ Յովհաննիսեան

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՅ

—

1 յուլիս

«Մշակի» № 104-ում տպած «Հին Բայազէթի արդի վիճակի» սարսափելի նկարագրութիւնը չը կարողացայ առանց արտասուք թափելու կարդալ, մանաւանդ այն սրտաճմլիկ խօսքերը, որ քաղցած հայի բերանից էին դուրս թռչում, թէ՝ «սպանես, մինչև հաց չը տաս չեմ երթար» և կամ գաղթականների ի խորոց սրտի բղխած այն յուսահատ բողոքներն և տրտունջներն, թէ «մեզ մարթողն մեզ դատաւոր, միանգամայն և դատախազ կըլլայ» և այլն, և այլն։

Աստուծոյ պատկերի նման ստեղծված խեղճ հայ մարդու այսպիսի հազար ու մի արդար տրտունջները և լաց ու կոծը լսելով՝ սիրտս մրմնջաց և ստիպեց ինձ կարողութեանս չափով օգնութիւն հասցնել։

Ուստի ուղարկելով ձեզ 25 ռուբլի՝ խնդրում եմ ընդունել սորան իբրև այրի կնոջ լուման և հասցնել Կ. Պոլսի սովելոց մասնաժողովին, զուցէ այս իմ չնչին նուէրս կազատէ մի սոված հայի գլուխքարասիրտ Սարի-Մէհմետների անողորմ մահակի հարվածներից։

Ներսէս Տէր-Մկրտչեանց

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

9 յունիսի

«Մշակի» պատուական թերթերի մէջ տպած առաջնորդող յօդուածները հնագիտական ժողովի մասին, որոնց մէջ առհասարակ նկարագրվում էր խայտառակ գոյներով մեր արդի մի տեսակ ուսումառած անուանվող երիտասարդութեան մեռելութիւնը և անտարբերութիւնը դէպի իրանց ազգի պատմութիւնը և սուրբ յիշատակները, խորին տխրութեան մէջ էին ձգում առհասարակ ընթերցող և բանիբուն հասարակութեան՝ և ատելութիւն ու արհամարհանք յարուցանում ամեն մի հայ ազգասէր սրտի մէջ ընդդէմ այդ ազգի արատների։

Դոցա թիւը որքան և չատ է Թիֆլիսում, նրանից պակաս չէ նաև մեր Գանձակում, որոնք խորթացած ու քաշված հայ կեանքից ու գրականութիւնից, միայն չէնարիների տակ սովորութիւն ունեն սորա և նորա գործունէութիւնը պախարակելու, այս և այն անձի վրա բամբասելու և հազար ու մի տեսակ արբչու խօսքեր չռայլելու։

Բայց, այնու ամենայնիւ՝ այս որոմների միջից դուրս են գալիս այնպիսի երիտասարդներ, որոնք ոչինչ դիպլոմաւոր ուսում չեն ստացած, այլ ունեն ազնիւ և եռանդուն հոգի միայն, որ թէև ընկճված բաղդի ամենածանր հարուածների տակ, զուրկ ամեն նիւթական միջոցներից՝ անձնատուր են եղած նորա հնութիւնները քրքրելու և հանելու ժամանակի աւերող հոսանքի տակ ծածկված փլատակների միջից։

Այսպիսիների շարքում մի սուրբ պարտականութիւն եմ համարում դասելու պ. Արսէն Թոխմախեանցին, որը մի ամբողջ տարի ճանապարհորդելով Գանձակի նահանգի դժուարանց ժայռերի ու անտառների մէջ՝ կարողացել է հանել լուսանկարով մի շարք հետաքրքիր հնութեանց տեսարանների։ Ցիչեալ պարոնը մտադիր լինելով հանդէս հանել իր պատկերները դպոց «Հնագիտական ժողովին», չուտով կուղևորվի Փոքր Արցախի, Սիսական աշխարհի, և Ազուանից երկրի հնութիւնները զննելու։

Ցանցանք կը լինէր իմ կողմից նաև չը յիշելու մեծ. Ղահրաման Ս. Յովհաննիսեանի անունը։

Այս հետաքրքիր և անխոնջ մարդը իր ժրաջան աշխատութեամբ արել է ուշադրութեան արժանի մի քանի հնութեանց գիւտեր։ Օրինակ, նա փորելով Փիրի գերեզմանները՝ գտել է զանազան կենդանիներ, որոնց ես ինքս ականատես եղայ և հիացայ նոցա ամուր ու դեղեցիկ շինուածքի վրա։ Սոցա մէջ նշանաւոր են. պղնձէ ոսկէջրած արծիւը, բաղէն և ապարանջանները։

Բայց ամենանշանաւոր նիւթ են ներկայացնում հնախօսի համար Արափլուի հողերը (Գանձակից երեք վերստ հեռաւորութեամբ)։ Այս ընդարձակ ու քարքարոտ դաշտը կարծես մի անապատ լինի, ուր բարձրանում են բազմաթիւ թմբեր։ Կարծես թէ երբեմն սորա վրա ապրել են մարդկային ամբողջ բանակներ. և այսօրս էլ փորեցէք այդ տեղը և դուք կը գտնէք զէնքի ու զրահի բեկորներ։

Այս դաշտի վրա, ուր բարձրանում են բլրանման թմբեր, եթէ փորէք դոցա, այդ տեղից դուրս կը գայ հայոց ամենասպիտակ լուսնահողը կամ կրահողը։

Շարունակելով յաջորդաբար փորելը, դուք կը տեսնէք կարգով չարած աղիւսներ կամ ասլեր, դոցա տակ մարդու ոսկորներ կամ մոխիր, իսկ մարմնու չորս կողմը մանր պուլիկներ (սափոր)։ Այս գերեզմանները չատ և չատ նման են փիրի գերեզմաններին։ Սոցա մէջ էլ գտել է Ղ. Ս. Յովհաննիսեանը 4 հատ ապարանջաններ ոտքի և ձեռքի, որոնցից երկուսը չատ գեղեցիկ են իսկ միւս երկուսը հասարակ, քթի և ականջի օղեր, մի բարակ կամար, արեգական և լուսնի (մահիկի) պատկերները ձուլածոյ, մի կանացի զարդարանքի մնացորդ—մի փոքր դաշնակ, մի բուրվար կամ խնկանօթ և այլն։ Այս բոլորը կարելի է վերաբերել թաթարներին։

Վերջացնելով մեր խօսքը խորին կերպով շնորհակալ ենք այս երկու անձինքներից իրանց աշխատանքի համար։ Իսկ ինչ վերաբերում է մեր Գանձակի մի քանի ճոռոմաբան, դատարկապորտ համալսարանականներին, նրանց պատկերը չատ լաւ նկարել է Մելիքզադէի բեղմնաւոր գրիչը. խորհուրդ ենք տալիս իրանց սնոտի վայրահաջողութեամբ չը վիրաւորեն իզուր սրա և նորա անձական պատիւը։

Ա. Մ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Յուլիսի 18-ին

Շտապում ենք հաղորդել պատուական խմբագրութեանդ, որ ներկայ յուլիս ամսոյս սկզբում ստացվեցաւ բարձրագոյն հոգևոր իշխանութենէն թոյլատրութիւն բանալու մեր քաղաքում հոգևոր դպրոց արուեստական դասարաններով։ Ցիշեալ դպրոցի հոգաբարձուք ընտրված են հետևեալ պատուաւոր անձինք՝ Ս. Յարութիւնեան (որ նմանապէս նշանակված է նախագահ խորհրդարանի), Գ. Տրապիզոնցեան, Յ. Պապասինեան, իսկ վերատեսուչ ընտրվեցաւ Ռ. Պատկանեանը։ Դպրոցի ուսումն պիտի սկսվի սեպտեմբերից։

Յուլիսի 16-ին մեր բանաստեղծը Ռ. Պատկանեան ուղևորվեցաւ դէպի Հայաստան՝ Ղրիմի վերայով։ Առանց այլևայլութեան Թիֆլիս ևս կը հանդիպի։ Մենք ճշգրիտ աղբիւրներից գիտենք, որ բարեկամների խնդրքի զիջանելով, նա խոստացել է իր տպաւորութիւնը «Մշակին» ուղարկելու, որպէս զի կարդացողները թարմ լուրեր ունենան մինչև նրա ճանապարհորդութեան մասին։

***

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՅ

—

Յուլիսի 11-ին

Վանայ հայ սովատանջների օգնութեանը մասնակցելու նպատակաւ բացեցի ստորագրութիւն։ Յաջողվեցաւ միայն իմ մի քանի բարեկամ տիկնանց կողմից համակրութիւն գտնել, որոնք և ստորագրեցին իրանց նուէրները։ Յայտնելով խորին շնորհակալութիւնս մեծապատիւ տիկնանց, ահա ուղարկում եմ ձեզ գոյացած գումարը և խնդրեմ ընդունել և ուղարկել ուր հարկն է, «Մշակի մէջ տպելով նուիրատուների անունները։ Տիկիններ. Մ. Ա. Դաւթեանց 3 ր., Մ. Դաւթեանց 2 ր., Ե. Զ. Խանդալամեանց 3 ր., Խ. Ա. Մակէդոնսկի 2 ր., Մ. Մարգարեանց 2 ր., Զ. Խաչատուրեանց 2 ր. Տ. Դաւթեանց 1 ր., Մ. Մ. Գեանջիցեանց 1 ր., Մ. Մելիք Զաքարեանց 1 ր., Զ. Թոթոսեանց 1 ր., Ա. Խաղուբեանց 1 ր., Թ. Աւետիսեանց 1 ր.։ Ընդամենը քսան ռուբլ։

Մ. Ա. Դաւթեանց

ՆԱՄԱԿ ԵԱԼՏԱՅԻՑ

—

Յուլիսի 1-ին

Կարդալով պատուական «Մշակ» լրագրի մէջ Ցանկա-Հայաստանի մեր համարիւն եղբայրների և քոյրերի անտանելի դրութեան մասին, այլ ևս չը կարողացայ անտարբեր մնալ և երկար ժամանակ շրջելէ յետոյ՝ յաջողվեցաւ ինձ հաւաքել ներքոյ յիշեալ բարեսիրտ անձանց նուիրատուութեամբ սոյն չնչին գումարը, 51 ռուբլի 50 կոպէկը, իսկ հանելով նրանից 50 կոպէկ փոստի ծախսը, կը մնայ 51 ռուբլի, որը այս ցուցակի հետ ուղարկելով ձեզ, մեծապատիւ խմբագիր, խնդրեմ բարեհաճէք կարգադրել ուր հարկն է։ Ալէքսանդր Դրամբեանց 5 ր., Յակոբ Տէր-Սարգիսեան 5 ր., Ելիսաւէթ Քապազճեանց 5 ր., Արտեմ Բերինեանց 5 ր., Լեւոնօրա Բերինեան 3 ր., Խանփերա Բերինեան 1 ր., Մահտեսի Յովհաննէս Ալանեան 3 ր., Յարութիւն Սարգիսեան 3 ր., Յակոբ Մելքոնեան 3 ր., Յովհաննէս Աճեմեան 1 ր., Անտոն Անուչեան 1 ր., Մարտիրոս Աճեմեան 50 կ., Յակոբ Աւետիսեան 2 ր., Յոհան Քոչարեան 1 ր., Մկրտիչ Վարդանեան 1 ր., Հաճի Հեսիպուլահ Լիֆենդի 3 ր., Մանուկ Արկանով 2 ր., Իսկուհի Գաբրիէլեան խօայզեանց 1 ր., Գալուստ 1 ր., Եմիր Հասան Թաթար 1 ր., Կարապետ Իշխանեան 1 ր., Հասան աղա 1 ր., Վաղարշակ Երևանցեանց 1 ր., Սողոմէ Քարաքաշեան 1 ր.։

Յակոբ Տէր-Սարգիսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 2 մայիսի

Յօգուտ Վանի սովատանջների հաւաքեցինք 40 ռուբլ 25 կ., որ և ուղարկում եմ ձեզ։

Ստեփանեանց Գասպար 1 ր., Խարազեանց Սիմէոն 1 ր., Էֆէնդեանց տիկին 1 ր., Արամակիսեանց տ. 20 կ., Յարութիւնեանց Միքայէլ 1 ր., Շադինեանց տ. 1 ր., Տէր-Ստեփանեանց տ. 1 ր., Լիմնեանց Յովհաննէս 1 ր., Թամամշեանց Բարսեղ 3 ր., Յովհաննէսեանց 40 կ., Առաքելեանց 20 կ., Պետրոսեանց 20 կ., Զքաւոր հայ 40 կ., Դանիէլեանց 20 կ., Ոսկանեանց 30 կ., Նահապետեանց 1 ր., Բաղրամեանց 1 ր., Կուզանեանց 1 ր., Արվանեանց 1 ր., Խանդամեանց տ. 1 ր., Ոսկան Աբրահամեանց 30 կ., Քուրքչեանց Գէորգ 1 ր., Քուրքչեանց տ. 1 ր., Մի հայ 1 ր., Պապեանց Խաչակ 1 ր., Փուղինեանց Վասիլ 1 ր., Ոմն 20 կ., Ոմն 40 կ., Մանդինեանց Ամիրան 1 ր., Ոմն 20 կ., Շադինեանց Միքայէլ 1 ր., Սիմէոնեանց Պետրոս 1 ր., Օրիորդ ոմն 1 ր., Պետրոսեանց 1 ր., Սիրունեանց 40 կ., Ալէքսանեանց 1 ր., Բէգլարեանց 40 կ., Մի աղքատ հայ 10 կ., Մի քահանայ 15 կ., Ոմն 20 կ., Բաբանեանց տ. 1 ր., Նահապետեանց Արշակ 1 ր., Չիթախեանց 3 ր., Վահանեանց տ. 1 ր., Ղազարեանց Սարգիս 1 ր., դերասաններ՝ Սարդարեանց 1 ր., Մատինեանց 1 ր., Տէր-Դաւթեանց 1 ր.։ Գումարն է 40 ր. 25 կ.։

Թէ այս վերոգրեալ հանգանակութիւնը և թէ այս անցեալ անգամներինը, որ արդէն ստացած ունի «Մշակի» խմբագրութիւնը, միայն ես չեմ ժողովել, այլ մի քանի երիտասարդներով, որոնք են պ. պ. Պարոն-Սարգսեանց Գէորգ, Վարձելեանց Լևոն, Արղութեանց Կոնստանտին, Շահբուդաղեանց Բարսեղ։

Սմբատ Յովուեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Кавказъ» լրագրին գրում են ՆՈՒԽՈՒՅ որ յուլիսի 12-ին քաղաքի հայոց գերեզմանատան մէջ գտնվեցաւ Նուխու տեղական դպրոցի աշակերտ Արամ Տէր-Թովմասեանի դիակը։ Երիտասարդը սարճանակով սպանված է եղել իր ընկերոջ Ալէքսանդր Նազարէթեանի ձեռքով, որ նոյն դպրոցի աշակերտ է։ Երիտասարդները միասին գնացին մանդալու գերեզմանատուն և այնտեղ կատարվեցաւ սպանութիւնը։ Նազարէթեանը խոստովանեց իր յանցանքը և յայտնեց որ զրդված է եղել դէպի այդ սպանութիւնը մի երրորդ անձի յորդորանքով և սպառնալիքներով։ Այդ երրորդ անձը, մի տեղացի բնակիչ և հեռագրատան մէջ ծառայող, կալանաւորված է արդէն։ Թէ Տէր-Թովմասեանի և թէ Նազարէթեանի ծնողները յուսահատութեան մէջ են։

—

Լրագիրներին հաղորդում են, որ ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴԻ տօնավաճառը, յուլիսի 15-ին եկեղեցական մաղթանքներից յետոյ, բացվեցաւ և նոյն օրը ժամը 1-ին, կէսօրից յետոյ, բարձրացրին տօնավաճառային դրօշակները։ Գեներալ նահանգապետ կոմս Իգնատիեվին սպասում են յուլիսի 17-ին։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ հաղորդում են մեզ հետևեալը։ «Յուլիսի 1-ին այստեղ հասան Թիֆլիսի հայոց թատրոնական մշտական խմբի դերասաններ պ. Ադամեան, պ. Սաֆրազեանց և մի քանի Թիֆլիսեցի սիրողներ։ Պարոնները տուեցին Ախալքալաքում չորս ներկայացումն, որոնք բաւական աջող անցան։ Երրորդ ներկայացման արդիւնքի կէսը պ. Ադամեանը ընծայեց տեղային երկսեռ դպրոցներին, իսկ չորրորդ ներկայացման անտրակտի ժամանակ պարոնը կարդաց մի ճառ, որի միտքն էր բացատրել հանդիսականներին Վասպուրականի սովատանջների դրութիւնը։ Ներկայացման ժամանակ պ. Ադամեանի առաջարկութեան հիման վրա պ. Տէր-Յովհաննիսեանց յանձն առաւ յօգուտ սովատանջների նուիրատուութիւն հաւաքել, որի գումարը հասաւ 64 ր. 20 կոպ.։ Բացի սորանից պ. Ս. Վարդանեանցի տան մէջ ընթրիքի ժամանակ հաւաքվեցաւ 6 ռուբլ նոյն նպատակով։»

—

ԱՐԳԻՆԻՑ (Ղարսի նահանգ) մեզ գրում են, որ պ. Շաղուբատով գաւառապետը չատ բարեխղճ կերպով կատարում է իր պաշտօնը և ժողովուրդը չատ գոհ է նրանից։ Պարոնը ոչ թէ միայն միչտ պաշտպան է հանդիսանում արդարութեան և իրաւունքի, այլ այս ձմեռվայ սաստիկ թանգութեան ժամանակ նա մեծ օգնութիւն հասցրեց աղքատներին թէ իր սեփական միջոցներով և թէ կառավարութենից ստացած նպաստներով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

—

Հելլենական խնդիրը վայրկենական կերպիւ կը ենջէ, Գարատաղի խնդիրը նոր շշուկներու առիթ կը լինի, քանզի երէկ կըսուէր թէ մայրաքաղաքիս Գարատաղի դեսպանը մեկներ է, բայց այս զրոյցը չը ստուգեցաւ։ Ուրիշ զրոյցի մը նայելով, արտաքին գործոց նախարարը Գարատաղի խնդիրը լուծելու համար գրաման հատուցում մը կառաջարկէ եղեր՝ փոխանակ հողի։ Սթամպուլ լրագիրը քաղաքականութեան այս վայրկենական հանդարտութեան միջոցէն օգուտ քաղելով՝ Գեր. Հասունեանի Կարդինալութիւն տրուելուն վրայ երկար յօդուած մը կը հրատարակէ։ Արդէն լսուած էր որ Հռոմ, կամ մանաւանդ Վատիկան, քանզի Պապութիւնն այժմ անդ պարփակեալ է, Արևելից արտաքոյ կարգի վիճակէն օգուտ քաղելու կը պատրաստուի, և բազմաթիւ քարոզիչներ ու ճիգվիթներ Արևելք կը ղրկէ հաւատոյ ծաւալման, իմա՝ Պապին անսխալականութեան և գերիշխանութեան գործին նոր քայլ մը տալու համար։ Հասունի Կարդինալութեան աստիճան բարձրացումն և մայրաքաղաքիս Պապական փոխանորդ Գեր. Վանութէլլիի պատուիրակութեան աստիճան տրուելն Հռոմի դիտաւորութիւնը կը ցուցնէ առաջին կարգի դիւանագէտ եկեղեցականներով Արևելից մէջ գործ տեսնելու։ Սթամպուլ այժմէն կը ծանուցանէ թէ Հակահասունեանք ոչ ևս հաւանականութիւն ունին իրենց դատը վաստակելու, և անշուշտ չուզելով «Գրիգորեան կուսակցութեան» (Հայաստանեայց եկեղեցւոյ ըսել կուզէ) հետ միանալ, խմբովին պիտի վերադառնան Հռոմի գիրկը, «մեղայ յերկինս և առաջի քոյ» գոչելով առ Ս. Պապն, որ արդէն իրենց ընդհանուր ներողութիւն շնորհած է։ Ասոնց ամենն Հռոմա-

կաններու գործեր են որք մեզ չեն վերաբերիր բնաւ. բայց ինչպէս միշտ կարծիք յայտնած ենք, Հռոմ կամ Վատիկան կատարեալ Կեսարականութիւն մ'է, որոյ սկզբունքն է համայն աշխարհի վրայ տիրապետել՝ առանց ազգութիւն ճանաչելու: Իսկ Հայաստանեայց եկեղեցւոյ սկզբունքն է ազատութիւն, և յայտնի է որ այս երկու եկեղեցեաց մէջ եղած տարբերութիւնն ազատութեան և բռնաւորութեան պատերազմն է: Արդեօք մեր եկեղեցականք բաւական աչք բացած են այս ճշմարտութիւնը գիտնալով անոր համեմատ շարժելու, և ազգային եկեղեցին ձիգվիթութեան խորամանկ հարուածներէն պահպանելու համար: Ազգային եկեղեցի ըսելով հասկանալու է կրօնական ազատութիւն, ժողովրդական իրաւունք, ներկայ ժամանակիս քաղաքակրթութեան սկզբունքներն, որոց ամենքը կարելի է պատուաստել ազատօրէն Հայաստանեայց եկեղեցւոյ վրայ, մինչդեռ Վատիկան զանոնք իբր մոլորութիւն կը հրաչակէ:

Դժբաղդաբար գաւառաց մէջ տգէտներ կրնան գտնուիլ, որք իրենց իրաւունքն նսաւի նման ոսպի ապուրի մը փոխարէն կը վաճառեն, թէպէտ և խնդակցութեան արժանի է որ այսպիսեաց թիւն առաջվընէ խիստ նուազ է այժմ: Այսօր Հայաստանեայց եկեղեցւոյ ինքնագլխութիւնն ու անկախութիւնը գնահատող Հայերն ահագին մեծամասնութիւն կը կազմեն, որք գոնէ իրենց նախահարց այս թանկագին աւանդն անվթար պահել կ'ուզեն: Արդեօք եկեղեցական դասն ալ պէտք եղած խնամքը կը տանի՞ այս մասին: Չը կայ զէնք մը որ Հռոմի դէմ այնչափ զօրաւոր լինի և այնչափ սարսափ պատճառէ անոր, քան արդի սկզբանց ծաւալումը, լուսաւորութիւնն ու ազատամտութիւնը. արդեօք մեր գաւառական առաջնորդներն, որոց վրայ անցեալ օր ուշադրութիւն կը հրաւիրէինք, և հոգ պիտի տա՞ն այս սկզբանց համեմատ ժողովրդական դաստիարակութիւնը ծաւալելու: Հայոց բեկորներուն վրայ ինկած մէկ կողմէն բողոքական ձիգվիթներ, միւս կողմէն պապական ձիգվիթներ, որք զանոնք խլելու համար ամեն ձիգ կը թափեն. բայց արդեօք Հայ ժողովուրդը պիտի կրնա՞յ իւր անհատականութիւնը պահպանել այս կրկնակի ձեռնարկներուն դէմ.—այս խնդիրն ապագային մէջ կրնայ լուծուիլ: Սթամբուլ գիտել կուտայ թէ քանի մը դարէ 'ի վեր Հռոմ Արևելից մէջ կարդինալ կարգած չէր, Տրապիզոնցի Յոյն եպիսկոպոս մը կաթոլիկութիւն ընդունելով Ֆէրարայի ժողովին մէջ Յունաց կաթոլիկ եկեղեցւոյ հետ միութեան ջերմ պաշպան կանգնած էր, և 'ի վարձատրութիւն իւր այս ծառայութեան, Պապը զինք կարդինալ անուանած էր: Այսու ամենայնիւ Յոյնք ոչ միայն իրենց եկեղեցական անկախութիւնը պահեցին, այլ և իրենց աշխատութեամբ մեծամեծ յառաջդիմութիւններ ըրին. իսկ այն Յոյն կարդինալն առաջին և վերջին եղաւ իւր սեռին մէջ. իւր գաղափարը չը կրցաւ առաջ երթալ և այսուհետև անհնարին է որ առաջ երթայ: Գեր. Հասուն՝ Հռովմի աթոռին մատուցած ծառայութեանց համար, որովք կաթոլիկները լատինացնելու և Հայոց մէջ պապականութիւնը ծաւալելու ձգնած է, վարձատրութիւն կընդունի կարդինալութեան աստիճանաւ: Բայց Յոյն կարդինալէն աւելի պիտի յաջողի՞ թէ ոչ: Թէպէտ և այս խեղճոյն ապագայն պիտի պատասխանէ, բայց այժմէն կրնամք գուշակել թէ քանի որ լուսաւորութիւնն ու ազատամտութիւնը ծաւալի՝ Հայաստանեայց եկեղեցւոյ ապագայն ապահովեալ է: Առ այժմ այս դէպքը կը հաստատէ Հակահասունեանց դատին վրայ մեր յայտնած կարծիքն, այն է թէ Հռովմայ առջև կորուսեալ դատ մ'է նա, և քանի որ Հակահասունեանք չեն ուզեր Հայաստանեայց եկեղեցւոյ գիրկը վերադառնալ, Հռովմի մեղայ գոչելէ զատ ուրիշ միջոց չունին, և անհնար է իրենց որ Կաթոլիկ մնալով հանդերձ ազգային եկեղեցի կազմեն. այլ ըստ ամենայնի Հռովմի հնազանդելու պարտաւոր են:

(Մասիս)

ՐՈՒՄԻՆԻԱ

—

«Polit. Corresp.» լրագրին գրում են Բուխարեստից հետևեալը:

Բումինական արտաքին գործերի մինիստր պ. Բօէրեսկու ուղևորվեցաւ Սինայա իշխան Կարլի մօտ: Լուր է տարածված, որ Բօէրեսկու մտադիր է իշխանին յանձնել իր հրաժարականը: Աւելի հաւանական է, որ Բումինական արտաքին գործերի մինիստրի ճանապարհորդութեան նպատակն է զեկուցումն անել արդէն վերջացած Արաբտաբիայի հարցի մասին և յայտնել մինիստրութեան վերջին խորհուրդի վճիռը՝ Բոլգարիայի հետ ունեցած անբաւականութիւնները խաղաղ ճանապարհով վերջացնելու մասին: Բօէրեսկուի բումինական ներկայացուցիչներին ուղղած շրջաբերականը յայտնում է, որ բումինական կառավարութիւնը ի նկատի կառնի մեծ պետութիւնների վճիռը Արաբտաբիայի վերաբերութեամբ: Բումինական հիւպատոսները հաղորդում են, որ Վարնայի և Օդէսսայի մէջ յարաբերութիւնները չափազանցած են: Վարնա պատերազմական շատ նաւեր են բերվում և այնտեղ գալիս են բազմաթիւ ռուս օֆիցերներ:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

—

ԱԹէնքից «Polit. Corresp.» լրագրին գրում են հետևեալը յուլիսի 3-ից:

Յունական կառավարութիւնը այժմ զբաղեալ է երկու հարցերով զբաղված: Դրանցից գլխաւորը այն ընդունելութիւնն է, որ կանի Բ. Դուքը Բերլինի կոնֆերենցիայի վճռին: Եթէ ինչպէս այդ վճիռը, նոյնպէս և Զերնօգորիային վերաբերեալը կընդունվի առանց բացարձակ պաշտօնական ընդդիմադրութեան, Յունաստանը պէտք է պատրաստվի կիսապաշտօնական պատերազմի համար ալբանցիների և Թիւրք զօրքերի փախստականների հետ և միևնոյն ժամանակ պէտք է համաձայնութիւն կայացնի Զերնօգորիայի և Բոլգարիայի հետ: Եթէ Բ. Դուքը կը համարձակվի պաշտօնապէս մերժել Եւրոպայի միաձայն վճիռը, այս դէպքում հաղիւ թէ Եւրոպան Յունաստանի պատճառով իր արիւնը թափի: Միւս հարցը, որ նոյնպէս իր վրա է դարձնում յունական կառավարութեան ուշադրութիւնը, Թիւրքայ պետական պարտքն է, որի մի մասը Յունաստանը պէտք է վճարէ: Այդ պարտքը եօթ միլիարդից աւելի է: Ամենքը իրաւացի են համարում, որ այդ պարտքերի մի մասը Յունաստանը վճարէ, բայց դեռ ևս որոշված չէ, արդեօք այդ պարտքի մասը համեմատ կը լինի՞ այն երկիրների եկամուտին, որոնք կոնֆերենցիայի վճռի համեմատ միանում են Յունաստանի հետ: Երբ իր ժամանակին կամենում էին այս միջոցը Բոլգարիայի վերաբերութեամբ գործադրել, Ռուսաստանի ներկայացուցիչը չը համաձայնեց: Այսպէս թէ այնպէս այդ հարցը կամ առանձին մասնաժողովը կը վճռի, կամ երկու հետաքրքրված պետութիւնների բանակցութիւնը և այն դէպքում, երբ կատարելապէս կը որոշվի Թիւրքիայի ֆինանսական դրութիւնը և այն հարցը թէ Բ. Դուքը իր բազմատեսակ պարտքերից ո՞րն է մտադիր հատուցանել:

ՉԵՐՆՕԳՈՐԻԱ

—

Յեռինիէից «Polit. Corresp.» լրագրին գրում են հետևեալը:

Կարելի է հաստատապէս ասել, որ Զերնօգորիայի մէջ, վերջին ծանր պատերազմի ժամանակ Թիւրքիայի հետ, գործերի դրութիւնը այնքան դժուար չէր, որքան այժմ, երբ այդ իշխանութիւնը բոլոր պետութիւնների հետ հաշտ է ապրում: Ալբանցիները թէպէտ փոփոխամիտ են, բայց նրանց ունեցած թշնամութիւնը դէպի չերնօգորցիները դարևոր է և նա տարածված է ալբանական բոլոր ցեղերի մէջ առանց բացառութեան: Այս հանգամանքը ի նկատի ունելով, կարելի է գաղափար կազմել Զերնօգորիայի գործերի դրութեան մասին: Երբ Բերլինի կոնգրեսը վճռեց տալ Զերնօգորիային Գուսինի և Պլավայի նահանգները, շատերը իրաւացի կարծում էին, որ այդ վճիռը դժուար կը լինի իրագործել: Բ. Դուքը չը կամեցաւ այդ նահանգները զիջել և նրանց պաշտպանութիւնը ալբանցիներին յանձնեց: Յետոյ իշխան Նիկոլայ համաձայնեց այդ նահանգները Սեմի նահանգի հետ փոխել, բայց Թիւրքաց կառավարութիւնը դաւաճանեց իր խոստմանը: Բ. Դռնից դրդված ալբանցիները ընդդիմացան այդ դաշնագրութեան իրագործմանը: Դրանից յետոյ պետութիւններից մէկը առաջարկեց յիշեալ նահանգների փոխարէն. Դուլցինիօ նաւահանգիստը տալ Զերնօգորիային: Թէպէտ Թիւրքաց կառավարութիւնը համաձայնեց այդ առաջարկութեան հետ, բայց ծածկաբար հրամայեց ալբանցիներին դարձեալ ընդդիմանալ: Ալբանցիները զինուորական մասնաժողով կազմեցին, որ իսկոյն 75000 պիաստր պատերազմական հարկ հաւաքեց: Երբ ալբանցիները և Բ. Դրան ուղարկած միրդիտները ամրացած դիրքեր բռնեցին, Թիւրքաց կառավարութիւնը յայտնեց, որ չէ կամենում Դուլցինիոն Զերնօգորիային զիջել: Զերնօգորիայի զինուորական դրութիւնը այժմ աւելի վատ է, քան թէ վերջին պատերազմի ժամանակ: Անտիվարիին փոանգ է սպառնում: Նրա դէմ ալբանցիները ամրացած դիրքեր են բռնել և իրանց դիրքերից մի քանի ժամվայ ընթացքում կարող են Անտիվարիին հասնել: Հաղիւ թէ այդ բաց քաղաքի զօրքերը կարողանան յետ մղել ալբանցիների յարձակմունքը: Այնուամենայնիւ Զերնօգորիան չէ փնտռում դաշնակիցներ, որովհետև վճռել է առժամանակ պաշտպանողական դիրք ունենալ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Անգլիական համայնքների ժողովի մի անդամ հարց առաջարկեց կառավարութեանը Հայաստանի մէջ եղած սովի մասին: Արտաքին գործերի մինիստրի օգնական Զարլզ Դիլկ պատասխանեց, որ թագուհու կառավարութիւնը շատ անգամ առաջարկել է Բ. Դրանը թեթևացնել Հայաստանի սովալլուկ ժողովրդի վիճակը, հաղկերի ապառիկները ազգաբնակութեանը ընծայելով: Պ. Գօշենին հրամայած է առաջարկել Թիւրքաց կառավարութեանը, որ նա չուշացնի այդ միջոցի իրագործելը:

—Կ. Պոլսից «Polit. Corresp.» լրագրին գրում են յուլիսի 19-ից, որ անգլիական և ֆրանսիական դեսպանները՝ Գօշեն և Տիսսօ վերջին ժամանակները խորհրդակցում են միմիանց հետ Բ. Դրան կողմից գերմանական աստիճանաւորներին հրաւիրելու մասին: Ասում են, որ երկու դեսպաններն էլ համաձայն են առաջարկութիւն անել Թիւրքաց կառավարութեանը անյապաղ հիմնել միջազգային ֆինանսական մասնաժողով:

—ԱԹէնքից «Հավասի» ընկերութեանը հաղորդում են, որ յունական զինուորական մինիստրը հրամայել է թեթև զօրաբաժինների հրամանատարներին կամաւորներ ընդունել նոյնպէս և Էպիրոսի և Թէսալիայի ցանկացող մահմետական բնակիչներին: Մահմետական կամաւորները այնպիսի երդում կը տան, որ իր մէջ նրանց կրօնի դէմ ոչինչ չի բովանդակի: ԱԹէնքի քաղաքային վարչութիւնը ժողով կազմեց և վճռեց յայտնել Եւրոպային Ա-թէնքի յաւիտենական չնորհակալութիւնը Բերլինի կոնֆերենցիայի վճռի համար: Այդ վճռի օրինակները արդէն յանձնված են պետութիւնների դեսպաններին:

—ԱԹէնքից «Polit. Corresp.» լրագրին գրում են, որ ազգաբնակութեան պատերազմական տրամադրութիւնը անցաւ և տեղի տուեց գործերի աւելի խելացի գնահատութեանը: ԱԹէնքում վճռված է չը սկսել պատերազմական գործողութիւններ մինչև պետութիւնները հրաւիրեն յունական կառավարութեանը զրաւել Յունաստանին վիճակված երկիրները:

—Կ. Պոլսից գրում են, որ յուլիսի 14-ին, Ֆրանսիական ազգային տօնին, այնտեղի յունական մայր եկեղեցում աղօթեցին Ֆրանսիայի համար: Եպիսկոպոսը մի քարոզով դովեց Ֆրանսիան և այնուհետև ներկայ եղող մօտ 2000 յոյներ երաժշտութիւնով, որ «Մարսելեզ» էր ածում, ուղևորվեցին Ֆրանսիական դեսպան Տիսսոյի տան մօտ: Յոյները բարձրաձայն կանչում էին «Կեցցէ Ֆրանսիա, կեցցէ նրա դեսպանը»: Պ. Տիսսօ մի ճառով չնորհակալութիւն յայտնեց այդ ցոյցը անող յոյներին:

—«Հավասի» ընկերութեանը հաղորդում են Կ. Պոլսից, որ պ. Տիսսօ յուլիսի 19-ին տեսութիւն ունեցաւ սուլթանի հետ և յայտնեց նրան, որ Ֆրանսիական Հանրապետութեան նախագահը, դադարեցնելով իր պաշտօնի ժամանակաւոր բնաւորութիւնը, նրան Ֆրանսիական դեսպան նշանակեց Կ. Պոլսի մէջ:

—Կ. Պոլսից «Daily News» լրագրին հաղորդում են, որ ռուսաց դեսպան Նովիկով Բ. Դրան ուշադրութիւնը դարձրեց ալբանցիների կռուի վրա չերնօգորցիների հետ և նախազգուշացրեց Թիւրքերին այդպիսի յարձակմունքների կրկնվելուց: Թիւրքաց կառավարութիւնը իր վարչութենից ճիշտ տեղեկութիւններ պահանջեց:

—«Հավասի» ընկերութեանը Կ. Պոլսից գրում են, որ երբ Բ. Դուքը յայտնեց, թէ չերնօգորցիների և ալբանցիների մէջ ծագած կռուի պատճառը չերնօգորցիներն են եղել, իշխան Նիկոլայ մի հեռագրով մերժեց այդ մեղադրանքը, որ, հեռագրի համեմատ, հաստատում է Թիւրքաց կառավարութեան համախոհութիւնը ալբանցիների հետ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԿԱՆԴԱՀԱՐ, 21 յուլիսի: Բօերների կորուստները հետևեալն են. 20 օֆիցեր, 400 եւրոպացի, 800 տեղացի սպանված են կամ անհետացած:

Կ. ՊՕԼԻՍ, 22 յուլիսի: Այսօր Աբեդդին-փաշային հասցրած է պետութիւնների համաձայն գրութիւնը Զերնօգորիայի վերաբերութեամբ: Բ. Դրանը երեք շաբաթ ժամանակամիջոց է տրվում Զերնօգորիայի հետ ապրիլի 12-ին կապած դաշնագրութիւնը կատարելու համար: Եթէ Թիւրքիան այդ դաշնագրութիւնը յիշեալ ժամանակամիջոցի մէջ չի կատարի, նա կը հրաւիրվի միանալ պետութիւնների հետ Դուլցինոն Զերնօգորիային յանձնելու համար:

ԼՕՆԴՕՆ, 22 յուլիսի: Կվետայից իբրև լուր հաղորդում են, որ աֆղանական ցեղերը միանում են Շամանի և Կանդահարի մէջ: Էյուբ-խան առաջ քաշվեց մինչև Միրկարէյ և իր զօրքերի մի մասը ուղարկեց Շամանի վրա յարձակվելու համար: Նրա հեծելազօրքը գնում է Կօկրանի վրա Կանդահարի համար ուղարկված պաշարները յափշտակելու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յուլիսի: Երէկ հասաւ այստեղ եպիսկոպական դեսպան իշխան Եանիգավարա իր ամուսնի հետ:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊՐԻԿԱԶԸ ՆՈՐԻՆ ԲԱՐԶՐՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐԲԱՑԻ ԹՈՑԼՏԻՈՒԹԵԱՆ հիման վրա իր ներկայութեամբ ներկայ յուլիսի 26-ին ԱՃՈՒՐԴ նշանակեց, երեք օրից յետոյ ԿՐԿԸ ՆԱՃՈՒՐԴՈՎ ներկայ տարում սպիտակեղէն և իրեր պատրաստելու Թիֆլիսի քաղաքային հիւանդանոցի աղքատանոցի և երակահատների (ֆելդշերների) ուսումնարանի համար, հետևեալը: Ա. հիւանդանոցի համար 300 տղամարդկերանց շապիկներ քաթանից, 103 կտաւից, 300 փոխաններ քաթանից և 103 կտաւից, 100 շապիկ կանանց քաթանից, 125 կտաւից, 76 կոֆտա ֆլամեան կտաւից, 400 երեսսրբիչ կտաւից, զուլբաներ կանանց 500, զոգնոցներ բամբակից 103, իւպկաներ 68, յատակ սրբելու բամբակ 1,733 արշին, գլխարկներ քաթանից 18 վիրշկանոց լայնութեան 150, բարձի երեսներ ֆլամեան կտաւից 400, կօվատներ արտօնութիւն ունեցող 7 կանանց համար սպիտակ պիկէից 14, սպիտակ պիկէից իւպկաներ 10, բայկի 15 լՀերներ արտօնութիւն ունեցող 15 կանանց համար, պիկէի լՀերներ 15, սպիտակ պիկէի խալատներ 15, բամբակի չուլքիներ 30, տուֆլիներ 400, 2 խոհարարներին հագուստ բամբակից 6, նրանց գլխարկներ ֆլամեան կտաւից 9, նահալու վերևի և ներքևի երեսներ պարուսինին 325 զոլ, փայտի աթոռներ 60, ժեշտի չը ներկված վեղրներ 30: Բ) Աղքատանոցի համար. Տղամարդկերանց շապիկներ քաթանից մի արշին լայնութեան 30, փոխաններ անգլիական պարուսինայից 40, մահուդի դգակներ 30, կանանց շապիկներ քաթանից մի արշին լայնութեան 50, շորեր քաթանից 20, բրդէ զուլպաներ 100, բամբակէ 100, կօշիկներ 100,, զոգնոցներ բամբակից 24, սպիտակ սփռոցներ քաթանից 2 արշին լայնութեան 6, սալֆէտներ մի արշին լայնութեան 100, ուղղի մահուդից վերարկուներ 20, ժեստի վեղրներ չը ներկված 4, կաթսաներ 1 պուդ 10 ֆունտ քաշով գանազան մեծութեան, 10 պահարաններ, 40 սեղաններից պահարաններ շինել և դ.) երակահատների ուսումնարանի համար շապիկներ կտաւից 50, փոխաններ կտաւից 110, ոաքի փաթաթոցներ կտաւից 90, թաշկինակներ 80, մելխանից բլուզաններ 54, վարտիքներ մելխանից 67, պալտոներ մելխանից 13, բլուզաններ և պալտոներ անգլիական պարուսինայից 65, գլխարկներ 38, զուլբաներ 90, բալշի երեսներ 270, ամբողջ կապալը 6,375 ր., 81½ կ.:

Աճուրդը կը կատարվի բերանացի և փակված ծրարներով, օրէնքների հիման վրա, իւրաքանչիւր առարկան առանձին, աճուրդը վերջացնելուց յետոյ յայտութիւններ չեն ընդունվում: Բերանացի և փակված ծրարներով աճուրդին մասնակցող անձանց յայտարարութիւնները կընդունվեն միայն աճուրդի և կրկնաճուրդի օրը 12 ժամից ոչ ուշ Պրիկազի ներկայութեամբ. փոստով ուղարկված յայտարարութիւններ կընդունվեն և աճուրդի ժամանակ: Յայտարարութեան հետ պէտք է լինի զիլդիական վիճակն և յուսալի գրաւ կապալի ⅓ գումարի: Ակզբնական փոդերը ստանալու համար հարկաւոր է գրաւ գանազան հիմնարկութիւնների տոմսակներով:

Աճուրդ կատարելու պայմանները կարելի է տեսնել ամենայն օր Պրիկազի կանցելեարիայում առաւօտեան 10—2 ժամը:

3—3

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Հրացաններ, բեվօլվերներ, դանակներ, գրիչներ, անուշահոտութիւններ, սապոն, զուլպաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ:

20—20

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Մինչև այս ԱՄՍՎԱՑ ՎԵՐՋԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ Արծրունու դալերէի մէջ: Գուլպաներ (տղամարդկերանց և կանանց), թաշկինակներ, պարուսինա, պատկերներ, հոտաւէտ ջրեր, հրացաններ, բէվօլվերներ, կողպէքներ, սղոցներ, դանակներ, զգալներ, ցիտրատ-մագնեզիա ծարաւից և այլն. այժմ ծախվում են 25%—50% էժան քան թէ ուրիշ տեղ:

8—10

Համեմատեցէք անգլիական խանութի թէյն գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի ֆունտը 2 բուբլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

39—100

Երևանայ Ազ. Հոգ. Դպրանոցին հարկաւոր է ռուս լեզուի համար մի ուսուցիչ Սեպտեմբերից. շաբաթական 26 դասին կըտանայ 1000 բուբլ տարեկան ռոճիկ: Յանկացողները պէտք է գոնէ մի արքունի միջնակարգ դպրոցում աւարտած լինեն և ծանօթ լինեն հայոց լեզուին ևս:

Տեսուչ Երևանայ Թեմական դպրանոցի Ս. Բէգ-Նազարեանց:

2—5

Ծախվում են ԳՐԱՍԵՂԱՆ, ՀԱՅԻ ՍԵՂԱՆ և ԱԹՈՌՆԵՐ: Եկիսավետինսկայա փողոց № 46 Թիֆլիսում:

2—5

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզօրով վիներական և բողազի հ., Իկյիս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուդվօվսկի ներքին հ., Շտէյմբօրսկի կիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրով վիներական և բողազի հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստվածատուրով վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ. Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առամնաբոյժ Օբրեխա աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՒ ՀՐԱՏԱՐԱԿ ՈՐԹԵԱՄԲ (Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ)

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) Կովկասեան Դրամագլխանոցի և ծախվում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱՒԹԻՒՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԷՈՆԵԱՆՑԻ:

Ա. ՏԱՐԻ նախագիտելիք (իբրև հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է Թիֆլիսի հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . . 35 կոպ.

Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, գինն է . . . . . 60 կոպ.

գումարով առնողներին զիջումն կը լինի: Մամուլի տակ է Գ. ՏԱՐԻՆ մասը քաղաքական:

13—20

ՎՈՉ ՎԱ ՊՎՑՍԱԳՈՓՈՄՔՈՒԻՈՅԵ ԴՈԳՈՈՈՒԿ ԻՍԿԻ՞

Աղէքսանդրապօլու երկսեռ դպրոցաց բարձր դասատանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ռուսաց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով: Ցանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձուք { Սարգիս Միրզայեանց. Սատուր Խաչակեանց.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ԵԳՕՐ ԿԱՄՈՒՄՕՎ ԵՒ ԸՆԿ. յայտնում է այդ առևտրական տան գործերով բոլոր հետաքրքրվածներին, որ գործերի ընդարձակվելու պատճառով այդ տան գլխաւոր գրասենեակը օգոստոսի 1-ից կը տեղափոխվի Գժակելի տան վերին յարկը Գանօվսկայա փողոցի և Երիվանսկայա հրապարակի անկիւնի վրա: Տուրքերի տալու և մուտքերի ստանալու համար գրասենեակը հասարակ օրերում բաց է լինում առաւօտեան 9 ժամից մինչև 2, իսկ կիրակի օրը 8—10 ժամ: Գնում է 1 և 2 փոխառութեան տոմսակներ և ծախում է նրանց այն պայմանով, որ գինը 12 ամիսների ընթացքում հատուցանվի: Այդ պայմաններով մի տոմսակ գնողը տարվայ ընթացքում մասն ունի տարածից այն 20 համարների, որոնք ցոյց են տրված վիպականի մէջ չորս տիրաժների: Ցանձնարարութեամբ գնում է և ծախում է մասնաւոր անձանց ամեն տեսակ անշարժ կայքեր, կոմիսիայով ծախում է ապրանքներ և նիւթեր: Ծախում է տրված պայմանագիրներ, բնակարաններ, խանութներ և դատարկ տեղեր քրէհով տալու համար: Տուրքերին մինչև նոր կարգադրութիւնը վճարում է.

1) Պահելու համար մինչև պահանջելը 4½%, պայմանաւոր 5½%, 2) տուրքերին 6 ամսով 5½%, 9 ամսով 6½%, 1 տարով 7½% 1½ տարով 8%, 2 տարով և. աւելի 9: 3) Այդ ընկերութեան 1 կարգի պայ ունեցողների մասնաւոր պայմանաւոր տուրքերին 9%: Պարտամուրհակով յայտնի անձի ապահովութեամբ փող տալու ժամանակ առնում է մի ամիս ժամանակով 10%, մի շաբաթ ժամանակով 9%:

Աւելի մանրաման տեղեկութիւններ ցանկացողները կարող են ստանալ ամեն օր գրասենեակի կառավարչից:

8—10 (2)

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ԵՒ

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Օգոստոսի 20-ից կը սկսուի քննութիւնները և նորեկների ընդունելութիւնը տղայոց և օրիորդաց 4—15 տարեկան հասակը:

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՈՒԵԼՈՒ Է ՊԱՆՍԻՈՆ ՈՒՐ ԿԸՆԴՈՒՆՎԵՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ԿԻՍԱԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ:

Բ. Միրիմանեանց

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱՅԻՆ կից կը բացվեն ՍԵՆՆԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԷ, ՇՕԿՕԼԱԴ, ԹԷՅ և պատրաստված հանքային զանազան ՐԶՐԵ: 28—40

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ ՎԵՐՋԱՑՐԱԾ, հայոց ծիսական և մասնաւոր ուսումնարաններում 8 ՏԱՐԻ դասախօսութիւն տրած մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ներկայ սեպտեմբերի 1-ից ցանկանում է ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՇՏՕՆ ստանալ բացառապէս ՌՈՒՍԱՑ լեզուից և ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և դաւառներում: Տեղեկանալ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ կամ ԷՆՖԻԱՆՋԵԱՆՑԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ:

4—22

ՄԻՆԱՍ ԳԻԼԶԱՏԵԱՆ, որ կանտորայ ունի ՓԱՐԻԶ քաղաքում, ընդունում է ամեն տեսակ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՑԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ կոմիսիոնով կատարելու անյապաղ, ամենայն ճշտութեամբ, և դիմում է պ. պ. վաճառականներին, առաջարկելով իր ծառայութիւնը:

3—5

Дозволено Цензурою 24 Іюля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона